

Գևորգ Էմին-Տերյան

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՏԻՊ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ «ՀՈՇՈՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ»**

Բանալի բառեր՝ Հոշոտված Հայաստան, Կարեն Միքայելյան, որբեր, հայերի ցեղասպանություն, հուշագրություն, Վահան Տերյան, անտիպ փաստաթղթեր, Մանուկ Հայաստան, Մոսկվայի հայկական կոմիտե, Ջապել Եսայան, Ավրորա Մարդիգանյան

Թվում է, թե Հայոց ցեղասպանությունը՝ որպես հայոց պատմության կարևորագույն և այսօր ևս քաղաքական նշանակություն ունեցող խնդիր, ավելի քան 100 տարի անց գոնե Հայաստանում պահվող վավերագրությունների մակարդակով պետք է լիովին տպագրված և հասու լիներ հետազոտողներին: Մակայն, ցավոք սրտի, հայկական տարբեր արխիվներում շարունակում են չտպագրված մնալ չափազանց արժեքավոր վկայություններ: Իրանցից մեկը հայ որբերի հիշողությունների սովոր թղթապանակն է՝ գրի առնված Կարեն Միքայելյանի կողմից:

1916 թվականի երկրորդ կեսին գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ Կարեն Միքայելյանը (1883-1941) այցելում է Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Աշտարակի, Օշականի, Ղուրղուղուլիի (Արմավիր), ինչպես նաև Բաքվի և Թիֆլիսի հայկական որբանոցներ և գրի է առնում հայ որբերի հիշողությունները: Կ. Միքայելյանից առաջ նմանատիպ նախաձեռնություն իրականացրել էր նաև Վահան Տերյանը, որը, 1915 թվականի վերջին այցելելով Երևան, 1916-ի հունվարին հանձնարարել էր Ցարսկոյե փողոցում գտնվող որբանոցի սաներին նկարագրել Հայոց ցեղասպանությունը¹, ապա երեխաների գրածները վերցնելով՝ վերադարձել էր Մոսկվա: Ժամանակագրական այս հերթագայությունը, Վահան Տերյանի և Կարեն Միքայելյանի հարաբերությունները, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ հաշվի առնելով²՝ կարելի է ենթադրել, որ այս երկու նախաձեռնությունները մեկ ընդհանուր ակունք ունեն, և եթե նկատի ունենանք, որ հենց 1916 թվականի կեսերից Կարեն Միքայելյանի նկատմամբ Վահան Տերյանի վերաբերմունքը փոխվում է թեականից դեպի ընդգծված դրականը, ենթադրելի է, որ

¹ Տե՛ս **Էմին-Տերյան Գ.**, Վահան Տերյանի անհայտ նախաձեռնությունը. հայ որբերի հուշերը, Եր., 2016:

² Տե՛ս նույն տեղում, էջ 126-133:

հայ որբերի հիշողությունները գրի առնելու միտքը եղել է Վ. Տերյանինը: Սակայն Կ. Միքայելյանն այս նախաձեռնությունն իրականացրել է յուրովի՝ ինչ-ինչ հանգամանքներից ելնելով փոխելով Վ. Տերյանի կատարած աշխատանքի որոշ սկզբունքներ: Դրանցից առաջինը վերաբերում է տեքստի ստեղծման սկզբունքին. ի տարբերություն Տերյանի, որի հանձնարարությամբ որբանոցի սաներն իրենք էին գրել իրենց հիշողությունները, Կարեն Միքայելյանն անձամբ է գրի առել երեխաների պատմածը, ինչը բովանդակային որոշակի տարբերությունների է հանգեցրել: Ճիշտ է, Կ. Միքայելյանը պատմությունները ներկայացրել է պատմողի անունից՝ առաջին դեմքով, սակայն իմաստային կորուստներ են եղել: Օրինակ՝ դրա հետևանքով նվազել է տեքստերի զգայական կողմը. Տերյանի հանձնարարությամբ երեխաների գրած տեքստերում նույնիսկ ջնջումների մեջ իմաստներ կան, ասենք՝ երեխան որոշել է ինչ-որ նախադասություն նորից ձևակերպել, ջնջել է այն, սակայն չի կարողացել գիծ քաշել հաց բառի վրա: Այսպիսի նուրբ շերտեր Կարեն Միքայելյանի աշխատության մեջ ավելի քիչ են: Փոխարենը կան մի շարք առավելություններ, ինչը ևս ենթադրել է տալիս, որ Տերյանի կատարած աշխատանքից հետո արդյունքները որոշակի ամփոփման են ենթարկվել, և ի մի են բերվել բացթողումները: Օրինակ՝ Տերյանի նախաձեռնության մեջ ընդգրկվել են միայն այն երեխաները, որոնք գրաճանաչ են, իսկ դա տարիքային որոշակի սահմանափակում է ենթադրում, Կարեն Միքայելյանի որդեգրած սկզբունքը թույլ է տվել արձանագրել նաև ավելի փոքր տարիքի երեխաների հիշողությունները: Բացի դրանից՝ Կարեն Միքայելյանի արածն ավելի գործնական է, քանի որ նա երեխաների հիշողությունները հրնթացս դարձրել է արևելահայերեն, իսկ Տերյանի պարագայում հիշողությունները «քարացած» տեքստեր են, որովհետև նույնիսկ լեզվական շերտերը իմաստներ են պարունակում (օրինակ՝ երեխան, նկարագրելով մոր մահը, սկսում է գրել բարբառով. կորցնում է լեզվի հանդեպ վերահսկողությունը) և, ըստ էության, ենթակա չեն խմբագրման: Կարեն Միքայելյանն իր լեզվական քաղաքականությունը հիմնավորում է այսպես.

«Բոլոր պատմածները գրի առայ առաջին դեմքով, ինչպես որբերը պատմում էին, միայն փոխանակ բազմաթիվ բարբառների, որոնք շատ անգամ խորթ են մեր ականջին ու անհասկանալի ընթերցողների լայն շրջանակների համար և որոնց ճիշտ վերարտադրությունը անհնար է մեր այբուբենով, ես որոշեցի վերածել գրածներս ամենիս մատչելի ռուսահայ բարբառի»³:

Կարելի է ենթադրել նաև, որ և՛ Տերյանի, և՛ Միքայելյանի նախաձեռնությունները գոնե քաջալերվել են Մոսկվայի հայկական կոմիտեի, որը մի քանի տասնյակ որբանոցներ էր ֆինանսավորում, և նրա նախագահի՝ Ստեփան

³ Միքայելյան Կ., Յոշոտուած Հայաստան, «Գործ», Բաքու, 1917, N 2, էջ 141:

Մամիկոնյանի կողմից: Չի բացառվում նաև, որ այս երկու նախաձեռնություններն էլ հետագայում պետք է այլ նախագծերի համար հիմք դառնային. 1917 թ. Մոսկվայում հրատարակվող «Армянский вестник» պարբերականում Յուրի Վեսելովսկին երկու մասից բաղկացած հոդված է տպագրում «Страдающие дети»⁴ վերնագրով, որտեղ ամփոփելով 1890-ականներից սկսած հայկական կոտորածների վերաբերյալ եղած գրականությունը, սակայն չնշելով ո՛չ Վահան Տերյանի, ո՛չ Կարեն Միքայելյանի անունները՝ գրում է, որ անհրաժեշտ է արդեն կազմել և սերունդներին թողնել «Հայ երեխայի գիրք»-ը, որտեղ ի մի կրերվեն հայ երեխաների հանդեպ գործված բարբարոսությունները⁵:

Ի տարբերություն Վ. Տերյանի նախաձեռնության՝ Կ. Միքայելյանի գրի առած պատմությունների մի փոքր մասը տպագրվել է 1917 թվականին Բաքվում հրատարակվող «Գործ» ամսագրում (NN 2, 3, 4, 5-6)՝ «Հոշոտված Հայաստան» ընդհանուր վերնագրով: Եթե չհաշվենք առաջաբանը, որով հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում իր կատարած աշխատանքի վերաբերյալ, տպագրված վեց պատմություններն էլ («Նախշունը», «Մողմունը», «Հայկազը», «Արմենակը», «Միրվարդը», «Եսթերը») առկա են Կարեն Միքայելյանի՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող ֆոնդում: Բացակայող առաջաբանը, ինչպես նաև մի քանի ուղղակի և անուղղակի վկայություններ փաստում են, որ արխիվում պահվող թղթապանակն ամբողջական չէ: Ուղղակի ապացույցներից է, օրինակ, այն, որ երեխաներից մեկի՝ Միսակ Սեդրակյանի (Լորո Միսակ) հատվածից ամբողջական էջեր են պակասում, ինչի պատճառով տեքստն անհնար է ամբողջացնել: Իսկ անուղղակի ապացույցներից է այն փաստը, որ Վահան Տերյանի և Կարեն Միքայելյանի հետ Հայոց ցեղասպանության վավերագրումը քննարկած Զապել Եսայանը ֆրանսերեն էր թարգմանել «Հոշոտված Հայաստանը» հուշագրությունից մի քանի դրվագ, ինչի համար իր հետ Ֆրանսիա էր տարել անհայտ քանակության և բովանդակության վավերագրություններ⁶: Պահվող նյութի ոչ ամբողջական լինելու մասին է վկայում նաև այն, որ Կարեն Միքայելյանի նշած որբանոցների աշխարհագրությունը («Այդպես ահա ես ընկալ որբերի աշխարհը և պտտեցի Երևանի, Էջմիածնի, Օջականի, Աշտարակի, Ղուրդուղուլու, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի և Բազուայ որբանոցները»⁷) միայն մասամբ է

⁴ Տառապող երեխաներ (ռուս.):

⁵ Տե՛ս **Веселовский Ю.**, Страдающие дети, «Армянский вестник», Москва, 1917, N 41-42, стр. 2:

⁶ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, հ. 1, Եր., 2012, էջ 8:

⁷ **Միքայելյան Կ.**, Յոշոտուած Հայաստան, «Գործ», Բաքու, 1917, N 2, էջ 140:

համընկնում ԳԱԹ-ում պահվող թղթապանակում առկա նյութին. Օշականի և Բաքվի որբանոցներից ոչինչ չկա գրի առնված:

Ի տարբերություն Վահան Տերյանի նախաձեռնության՝ Կարեն Միքայելյանի աշխատությունը, մասամբ տպագրված լինելուց բացի, արժանացել է նաև գրականագիտական անդրադարձի. գրականագետ Ռոբերտ Բաղդասարյանը և՛ առանձին հոդվածով⁸, և՛ մենագրության առանձին ենթագլխով⁹ անդրադարձել է մեծ մասամբ անտիպ այս աշխատությանը՝ նախ ներկայացնելով ստեղծման պատմությունը և այն խնդիրներն ու նպատակները, որ ունեւր Կարեն Միքայելյանը, պապ նաև ընդգծելով նրա հրատարակման կարևորությունը:

Ընդհանուր առմամբ, թղթապանակը կազմված է մոտ 300 էջից, որի մեջ կան 31 երեխաների մասին հիշատակություններ: Նյութերը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ 15 երեխաներ են, որոնք Կարեն Միքայելյանին մանրամասնորեն պատմել են իրենց հիշողությունները: Կարևոր է, որ Կ. Միքայելյանը պահել է նաև այդ հիշողությունների սևագրերը. կան նկարագրություններ, որոնք պարզապես անհավատալի են թվում, և տպավորություն է ստեղծվում, որ Կարեն Միքայելյանը գեղարվեստականացրել է երեխաների պատմածը, սակայն սևագրերից երևում է, որ այդ պատկերները «գրողական միջամտության» հետևանք չեն: Օրինակ՝ երեխաներից մեկը պատմում է քուրդ բեկի սենյակի դռան տակից հոսող արյան առվակի մասին, ինչից իրենք հասկանում են, որ հայ տղամարդկանց հետ գիշերային հյուրասիրությունն ավարտվել է սպանողով: Վավերագրի սևագրից պարզ է դառնում, որ Կարեն Միքայելյանը ճշգրտորեն փոխանցել է երեխայի պատմածը:

Առաջին խմբի երեխաներն են.

1. Արմենակ Բաղդասարյան (Թմբրոյենց) (ծն. 1902, Խնուսի Ղարաքորրի գյուղ),
2. Գուլեզան Վարդանյան (Գուլու) (1906, Մանազկերտ),
3. Էսթեր Մոմճյան (1901, Ամասիա, բայց պատմում է Սամսոնի դեպքերի մասին),
4. Երվանդ Մկրտչյան (Դարչի Մկրտչենք) (1903, Վան),
5. Զարե Մկրոյենց Մուրադ (1902, Մուշի Վարդենիս գ.),
6. Հովհաննես Կլոյենց (Հովսեփյան, Կլոյան) (1903, Քրի շրջանի Թեմրան գ.),
7. Ղուկաս Հովհաննիսյան (1900, Սասունի Գելեգուզան գ.),
8. Մայրանույշ Հյուսյան (1902, Վան),

⁸ Բաղդասարյան Ռ., Կ. Միքայելյանի «Հռոտոված Հայաստանը», Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1997, N 1, էջ 276-279:

⁹ Багдасарян Р., Карен Микаэлян. Творчество и вклад в русско-армянские литературно-культурные взаимосвязи, Ер., 2010, стр. 185-190.

9. Նախշուն Սահակյան (Արոյենց) (1903, Մուշի Բազվա գ.),
10. Հայկազ Շլրմ-Խորենց (1912, Մուշի Տապավանք գ.),
11. Սիրանույշ Մկրտչյան (Փայրեջյան) (1901/1902, Վան),
12. Սիրվարդ Խաչատրյան (1906, Վան),
13. Սողոմոն Մխիթարյան (1902, Մուշի Խարց գ.),
14. Ազիզ Հայրապետենց (1910, Շատախ),
15. Միսակ Սեդրակյան (Լորո Միսակ) (1900, Բիթլիսի Փրխոս գ.):

Երկրորդ խմբի երեխաները 16-ն են. նրանց մասին կան տվյալներ ու նկարագրություններ, սակայն շատ համառոտ: Հատկանշական է, որ այս երեխաների թվում են հետագայում հայտնի գրողներ Գուրգեն Մահարին, Նաիրի Զարյանը, Վաղարշակ Նորենցը, որոնց մասին Կարեն Միքայելյանը տասնամյակներ անց գրառումներ է կատարել՝ թղթապանակի նյութերում ավելացնելով գրական կեղծանունները:

Բացի երկուսից՝ երկու տարեկան Փիլոյից և Անթառամից, որոնց հետ երկխոսությունը, ըստ երևույթին, չի ստացվել, մնացած 14 երեխաները շատ հստակ ներկայացրել են իրենց տվյալները՝ Գևորգ Պարոնիկյան (ծն. 1900, Վան), Հայաստան Եղիազարյան (1900, Արճակի շրջանի Խառակոնիս գ.), Լևոն Ասեղյան (1902, Վան), Մնացական Հովհաննիսյան (1900, Վան), Գուրգեն Աճեմյան (1903, Վան), Գառնիկ Խաչատրյան (Մուխսյանց) (1901, Վանի Սևան գ.), Պարզև Մուրադյան (1903, Հայոց Ձորի Կղզի գ.), Անդրանիկ Թիբլոյան (1904, Բուլանդուզ Յոնջալու գ.), Վարդ. Մուրադյան (1901, Հայոց Ձորի Կղզի գ., Պարզև Մուրադյանի եղբայրը), Հովհ. Բարթուղիմեոսյան (1904, Վան), Գրիգ. Մխիթարյան (1902, Վանի Սոկո գավառի Հաղին գ.), Ալեքսանդր Սամվելյան (Երիցենց) (1904, Վան), Համբարձում Մկրտչյան (Համբարձումենց) (1904, Հայոց Էրեմի գ.), Վաղարշակ Երիցյան (Տերտերենց) (1903, Սասունի Շենիկ գ.):

Մինչ բովանդակային կողմին անցնելը հարկ է անդրադառնալ Կարեն Միքայելյանի ընդարձակ հիմնավորմանը, որն արձակագիրը տպագրել է «Գործ» ամսագրում՝ որպես «Հռոտոված Հայաստան» հոդվածաշարի նախաբան.

«Անցած աշնան և ձմրան ամիսներին¹⁰ այցելեցի այն վայրերը, ուր ցաք ու ցրիւ ընկած էին այժմ հայութեան մի մեծ մասի խղճուկ բեկորները՝ ընչազուրկ և հիւժուած: Ինձ այդ վայրերը մղողը մի կողմից քաղաքացիական պարտքի զգացմունքն էր՝ մի կերպ օգտակար լինել հանդէպ այն ծով կարիքների, որ բաժին ընկաւ իմ ցեղին, միւս կողմից գրական մարդու դիտելու և ճանաչելու ներքին պահանջը: Բայց շուտով երկրորդ ձգտումս գերակշռեց:

Իմ մէջ յառաջացաւ մի անզուսպ ցանկութիւն հաղորդակից լինելու տաճկահայի ողբերգութեանը, երբ նրա երկիրը աւերուեց, ընտանիքը քայքայուեց ու

¹⁰ Խոսքը վերաբերում է 1916 թ.-ին – Գ. Է.-Տ.:

պղծուեց, հարազատները մարտիրոսացան և նա ընկաւ տառապանքի ու դեզերումների աշխարհը: Դրա համար հարկաւոր էր, որ տեսնէի նրա աչքով, լսէի նրա ականջով և զգայի նրա սրտով, չը կորցնելով միևնոյն ժամանակ վիպագրողի անաչառութիւնն ու արձանագրողի սառնասրտութիւնը:

Երկար որոնումներից յետոյ համոզուեցի, որ իմ այդ պահանջներին ամենից շատ բաւարարութիւն են տալիս երեխաները:

Մեծերը չէին կարողանում հանգիստ և որ գլխաւորն է՝ առանց պաֆոսի պատմել իրենց գլխին եկածը, ինչպէս այդ անում էին երեխաները: Եվ ինչքա՛ն խնդիրներ են պարզում, երբ պատմողը՝ անաչառ, անկեղծ և ճշմարտախօս մանուկն է: Մեծերի պատմութիւնները սովորաբար ազատ չէին լինում լրագրական կանխակալ կարծիքներից, կուսակցական միտումներից, անգամ ազգային նեղսրտութիւնից»¹¹:

Մի փոքր այլ կերպ է Կարեն Միքայելյանը հիմնավորում իր նախաձեռնութիւնը 1916 թ. դեկտեմբերի 6-ին Հովհաննէս Թումանյանին գրած նամակում, այսինքն՝ մինչ վավերագրությունների հրատարակումը.

«Ձեզանից բաժանվելուց հետո մինչև օրս Երևանի նահանգում եմ: Շրջում էի տեղիս որբանոցները: Երկու նպատակ ունեի: Նախ՝ գրի առնել տաճկահայերի վերջին ողբերգությունն ըստ մանուկների պատմածների և դրանց հիման վրա գրել գեղարվեստական երկեր, չդուրս գալով նյութի սահմաններից:

Երկրորդ, հավաքել երեխաների՝ ինձ համար միանգամայն անսպասելի կերպով երևան եկած գրական արտահայտությունները: Այժմ ձեռքիս տակ ունիմ մի մեծ գրականություն: Այդտեղից ընտրել եմ բանաստեղծական գրվածքներ, որոնց մեջ կան հաճախ շատ հաջող կտորներ: Այդ կտորները իրենց մեջ արտացոլում են վերջին դեպքերը: Շատ հետաքրքրական և սրտառուչ է, թե ինչպէս է երգում երեխան իր վիշտն ու ուրախությունը, իր կրած տանջանքները, իր տեսած արտասուքները»¹²:

«Հոշոտված Հայաստանը» հարուստ նյութ է պարունակում տարբեր գիտակարգերի հետազոտողների համար: Առաջին հերթին խոսքը վերաբերում է պատմագիտությանը. երեխաների վկայություններում առկա են բազմաթիվ նոր փաստեր, տվյալներ, նկարագրություններ, որոնք ստիպում են վերագնահատել արդեն գրեթե քարացած պատկերացումները Հայոց ցեղասպանության այս կամ այն դրվագի, փաստի կամ նույնիսկ անձանց վերաբերյալ: Օրինակ՝ Մասունի ինքնապաշտպանության մանրամասն նկարագրությունը բազմաթիվ հարցերի է պատասխանում: Բացի դրանից՝ Կարեն Միքայելյանի գրի առած

¹¹ Միքայելյան Կ., Յոշոտում Հայաստան, «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, N 2, էջ 140:

¹² Վարդանյան Վ., Կարեն Միքայելյանի նամակներից, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1981, N 2, էջ 91:

վավերագրությունը հետաքրքիր կարող է լինել հոգեբանի, սոցիոլոգի, ազգագրագետի և այլ հետազոտողների համար:

Առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ նաև Կարեն Միքայելյանի աշխատության և Ավրորա Մարդիգանյանի (Արշալույս Մարտիկյան) ինքնակենսագրական վեպի կապը, քանի որ երկուսն էլ նույն վերնագիրն ունեն` «Հռոտոված Հայաստան», ինչը չէր կարող պատահականության հետևանք լինել: Սակայն նախ այն հանգամանքից, որ Կ. Միքայելյանի աշխատանքը նույն վերնագրով մոտ մեկ տարի ավելի շուտ է հրատարակվել, քան Ա. Մարդիգանյանինը, ապա նաև նրանից, որ Միացյալ Նահանգներ մեկնելուց առաջ Ա. Մարդիգանյանն անցել է Կովկասով, հետո կարճատև կանգառ է ունեցել Պետերբուրգում, կարելի է ենթադրել, որ եթե, այդուհանդերձ, ազդվող կողմ եղել է, ապա հաստատ Կարեն Միքայելյանը չէ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո այլևս անհնար էր դարձել «Հռոտոված Հայաստանի» տպագրությունը: Գուցե քաղաքական արգելքները մեղմելու և իր աշխատությունը հրատարակելու նպատակով Կարեն Միքայելյանը փոխել է ընդհանուր վերնագիրը` այն դարձնելով «Մանուկ Հայաստան»: Սակայն այս փոփոխությունը, բնականաբար, չէր կարող փոխել գրքի բովանդակությունը և կանաչ ճանապարհի հարթել: Գրքի տպագրության փորձերի մասին առայժմ ոչինչ հայտնի չէ, սակայն ԳԱԹ-ում պահվող թղթապանակի առաջին էջում Կարեն Միքայելյանն ի վերջո գրել է հետևյալը. «Պատրաստի նյութեր. Թող լույս տեսնի ՄԻ ՕՐ այս գիրքը»:

Геворг Эмин-Терян

**НЕОПУБЛИКОВАННЫЙ ДОКУМЕНТ ГЕНОЦИДА АРМЯН:
«РАСТЕРЗАННАЯ АРМЕНИЯ» КАРЕНА МИКАЕЛЯНА****Резюме**

Ключевые слова: *Растерзанная Армения, Карен Микаелян, сироты, Геноцид армян, мемуары, Ваан Терян, неизданные документы, Дитя Армения, Армянский комитет Москвы, Запел Есаян, Аврора Мардиганян*

Во второй половине 1916 года писатель, публицист, переводчик, общественный деятель Карен Микаелян (1883-1941) посетил армянские детские дома в Ереване, Александрополе, Эчмиадзине, Аштараке, Ошакане, Хурдухули (Армавир), а также в Баку (Азербайджан) и Тбилиси (Грузия) и записал воспоминания армянских сирот. Несколько из этих рассказов в 1917 году он опубликовал в бакинском журнале «Работа» (NN 2, 3, 4, 5-6) под общим названием «Растерзанная Армения».

В целом, папка состоит из около 300 страниц, в которых есть упоминания о 31 ребенке. Материалы можно разделить на две группы. В первой группе 15 детей, которые подробно рассказали Карену Микаеляну свои воспоминания. Во второй группе 16 детей. О них есть краткая информация и описание. Примечательно, что среди этих детей были Гурген Маари, Наири Зарян, Вагаршак Норенц, которые позже стали известными писателями.

После советизации Армении Карен Микаелян, возможно, чтобы смягчить политические препятствия и опубликовать свою работу в виде книги, изменил общее название на «Дитя Армения», но ее все равно так и не выпустили в свет.

Gevord-Emin Teryan

THE UNIQUE DOCUMENTARY OF THE ARMENIAN GENOCIDE:
KAREN MIQAYELYAN'S "REVAGED ARMENIA"

Summary

Key words: *Ravished Armenia, Karen Mikaelyan, orphans, Armenian genocide, Memoir, Vahan Teryan, unpublished documents, Little Armenia, Armenian Committee of Moscow, Zabel Yesayan, Aurora Mardiganian*

In the second half of 1916, writer, publicist, translator and public figure Karen Mikaelyan (1883-1941) visited Yerevan, Alexandropol, Etchmiadzin, Ashtarak, Oshakan, Ghurdughuli (Armavir), as well as Armenian orphanages in Baku and Tbilisi (Georgia) and wrote memoirs of Armenian orphans.

A small part of the stories written by Karen Mikaelyan were published in 1917 in Baku's "Gorts" magazine (NN 2, 3, 4, 5-6) with the general title "Ravished Armenia". In total, the folder consists of about 300 pages, which contains references to 31 children.

The materials can be divided into two groups. There are 15 children in the first group, who told Karen Mikaelyan in detail their memories. The number of children in the second group is 16, there are data and descriptions about them, but they are very brief.

It is worth mentioning that later famous writers Gurgen Mahari, Nairi Zaryan, Vagharshak Norents were among these children.

After the sovietization of Armenia, Karen Mikaelyan changed the general title into "Little Armenia" perhaps to alleviate political obstacles and to publish his work, but the book was not published.